ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ , ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-ԻՆԻՑ -3-ՐԴ ԵՎ 4_ՐԴԻՑ – 7- ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ » ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/7» -131-19

ք. Երևան «21» 03 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Իմպերիում » ՍՊԸ -ն ի դեմս Ընկերության տնօրեն Գայանե Ադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սպորտային միջոցառումների կազմակերպում/** «Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-րդից-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման » ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 17876000 (տասնյոթ միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[4]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	«Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 9	ք. Երևան, Ա.Ավետիսյան 112 7
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 900011010957	Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ 02586282	ՀՎՀՀ 00135548
Գլխավոր քարտուղար՝ Վ. Էլոյան	Տնօրեն՝ Գ.Աղյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«21» 03 20 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/7-131-19» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման		
						հասցեն	ժամկետը**	
1	9262110/2	**Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-ից 7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման ծառայությունների ձեռքբերում** Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-ից 7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման նպատակն է՝ Անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, -դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում: Միջոցառման խնդիրներն են՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով դպրոցահասակ երեխաների ֆիզիկական դաստիարակության, առողջության ամրապնդման, նրանց ֆիզիկական որակների բարելավում, -դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում. -դպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում. -դպրոցական հիմնարկներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում: Միջոցառումն անցկացվելու է 4 փուլով. 1-ին փուլի համար ծառայության մատուցման անհրաժեշտություն չկա: 2-րդ փուլը՝ ՀՀ մարզերի 41 քաղաքներում (տարածաշրջաններում), Երևան	դրամ	17876000	1	*2-րից -4-րդ փուլերը* *2-րդ փուլ՝ՀՀ համայնքներում, Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության Սկեփանակերտ քաղաքում* *3-րդ փուլ՝ ՀՀ 10 մարզերում, Երևանք աղաքի և Արցախի հանրապետության Սկեփանակերտ քաղաք* 4-րդ եզրափակիչ փուլ՝ Գյումրի Ք.Վանաձոր	**(25.03.2019 - 15.05.2019թ)** 25.03-04.05.2019թ 10.04-25.04.2019թ 06-08.05.2019թ 13-15.05.2019թ

		քաղաքի (12) 10 վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների (թվով 52), 2019թ. մարտի 25-ից ապրիլի 5-ը: 3-րդ փուլ՝ ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում՝ 2019թ. ապրիլի 10-ից 25-ը: 4-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումներ՝ 1-ինից 3-րդ դասարանների միջև 2019 թվականի մայիսի 6-ից 8-ը՝ քաղաք Գյումրի և 4-րդից 7-րդ դասարանների աշակերտների միջև՝ մայիսի 13-ից 15-ը՝ քաղաք Վանաձոր: «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը: Մրցումների 1-ին ներդպրոցական փուլի անցկացման հսկողությունը իրականացնում են ՀՀ մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, մրցումների 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման աշխատանքները համայնքներում իրականացնում են համայնքապետարանները և Երևանի քաղաքի վարչական շրջանները և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, մրցումների 3-րդ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, իսկ 4-րդ՝ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարությունը: Թիմի կազմը 1-ից 3-րդ դասարաններ՝ 5 տղա, 5 աղջիկ, 1 մանկավարժ և 1 ներկայացուցիչ *(1-ին դասարան՝ 1-տղա, 1-աղջիկ, 2-րդ դասարան՝ 2-տղա, 2-աղջիկ և 3-րդ դասարան՝ 2-տղա, 2-աղջիկ).* 4-7-րդ դասարաններ՝ թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ, 1 մանկավարժ և 1 ներկայացուցիչ) *(4-րդ դասարան՝ 1-տղա, 1-աղջիկ, 5-րդ դասարան՝ 1-տղա, 1-աղջիկ, 6-րդ դասարան՝ 1-տղա, 1-աղջիկ և 7-րդ դասարան՝ 2-տղա, 2-աղջիկ):* Մրցույթի 2-րդ փուլում մրցանակային տեղեր գրաված դպրոցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, իսկ 3-րդ փուլերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, շնորհակալագրերով և մրցանակներով (մարզագույք): Միջոցառման 4-րդ՝ եզրափակիչ փուլում ընդհանուր թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները պարգևատրվում են Նախարարության հավաստագրերով, մեդալներով, գավաթներով: Մրցույթի եզրափակիչ փուլի 4-12-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները երկու տարիքային խմբերում պարգևատրվում են մարզագույքով և շնորհակալագրերով, ինչպես նաև 4-րդ փուլի մասնակից բոլոր երեխաներին տրվում են նվերներ:					

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

(1-ից 3-րդ դասարան) և (4-ից 7-րդ դասարան)

1. Վկայագիր (Հավաստագիր) չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ

Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝

Համայնային փուլ՝ 52 x 3 հատ x 2 տարիք = ***312 հատ***

Մարզային փուլ՝ 12 x 3 հատ x 2 տարիք = ***72 հատ***

Եզրափակիչ փուլ՝ 49 հատ x 2 տարիք = ***98 հատ***

2. Հուշանվեր (գավաթ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակության համար)՝ 50սմ-(128 հատ), 45 սմ-(128 հատ) և 40սմ-(128 հատ) բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով, նմանտիպ, պատվանդանի տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝

՝

Համայնային փուլ՝ 52 x 3 հատ x 2 տարիք = ***312***

Մարզային փուլ՝ 12 մարզ x 3 հատ x 2 տարիք = **72**

3. Հուշանվեր (գավաթ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակության համար)՝ 55սմ-(2 հատ), 50սմ-(2 հատ) և 45 սմ-(2 հատ) բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով նմանտիպ, պատվանդանի տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝

՝

Եզրափակիչ փուլ 3 հատ x 2 տարիք = ***6 հատ***

4. Գնդակ ֆուտբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), յուրաքանչյուր թիմին՝ **1-ին տեղ- 6 հատ, 2-րդ տեղ- 5 հատ և 3-րդ տեղ -4 հատ:**

Մարզային փուլ՝ 12 x 15 հատ x 2 տարիք = **360 հատ**

4-ից 12-րդ տեղեր գրված դպրոցներին 4 ական հատ

*Եզրափակիչ փուլ՝ 9 x 4 հատ x 2 տարիք =****72 հատ:***

5. Գնդակ վոլեյբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ

մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ N 6, յուրաքանչյուր թիմին՝ **1-ին տեղ- 6 հատ, 2-րդ տեղ- 5 հատ և 3-րդ տեղ - 4 հատ:**

Մարզային փուլ՝ 12 x 15 հատ x 2 կարիք = **360 հատ,**

4-ից 12-րդ տեղեր գրաված դպրոցներին 4 ական հատ

*Եզրափակիչ փուլ՝ 9 x 4 հատ x 2 կարիք = **72 հատ:***

6. Գնդակ բասկետբոլի՝ Արհեստական կաշվից, N 7 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 6, յուրաքանչյուր թիմին՝ **1-ին տեղ- 6 հատ, 2-րդ տեղ- 5 հատ և 3-րդ տեղ - 4 հատ:**

Մարզային փուլ՝ 12 x 15 հատ x 2 կարիք = **360 հատ,**

4-ից 12-րդ տեղեր գրաված դպրոցներին 4 ական հատ

*Եզրափակիչ փուլ՝ 9 x 4 հատ x 2 կարիք = **72 հատ:***

7. Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ, յուրաքանչյուր թիմին՝ **1-ին տեղ- 1 հատ, 2-րդ տեղ- 1 հատ և 3-րդ տեղ - 1 հատ:**

Մարզային փուլ՝ 12 x 3 հատ x 2 կարիք = **72 հատ,**

4-ից 12-րդ տեղեր գրաված դպրոցներին 1 ական հատ,

*Եզրափակիչ փուլ 9 x 1 հատ x 2 կարիք = **18 հատ:***

8. Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝ Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ, յուրաքանչյուր թիմին՝ **1-ին տեղ- 6 հատ, 2-րդ տեղ- 5 հատ և 3-րդ տեղ - 4 հատ:**

Մարզային փուլ՝ 12 x 15 հատ x 2 կարիք = **360 հատ**

4-ից 12-րդ տեղեր գրաված դպրոցներին 2 ական հատ,

*Եզրափակիչ փուլ 9 x 2 հատ x 2 կարիք = **36 հատ**:*

9. Ցատկապարաններ. պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան, յուրաքանչյուր թիմին՝ **1-ին տեղ- 9 հատ, 2-րդ տեղ- 6 հատ և 3-րդ տեղ - 3 հատ:**

Մարզային փուլ՝ 12 x 18 հատ x 2 տարիք = **432 հատ**

4-ից 12-րդ տեղեր գրաված դպրոցներին 6 ական հատ,

*Եզրափակիչ փուլ 9 x 6 հատ x 2 տարիք = **108 հատ:***

10. Վայրկյանաչափ էլեկտրոնային, պլաստմասսե պատյանով, յուրաքանչյուր թիմին՝ **1-ին տեղ- 2 հատ, 2-րդ տեղ- 2 հատ և 3-րդ տեղ - 2 հատ:**

Մարզային փուլ՝ 12 x 6 հատ x 2 տարիք = **144 հատ**

4-ից 12-րդ տեղեր գրաված դպրոցներին 1 ական հատ,

*Եզրափակիչ փուլ 9 x 1 հատ x 2 տարիք = **18 հատ:***

11. Մեդալներ. չափը՝ 5 սմ տրամագծով x 3 սմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից:

*Եզրափակիչ փուլ 36 հատ x 2 տարիք = **72 հատ:***

12. Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար՝ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով): Չափսերը 120 հատը 7-9 տարեկանների համար, 120 հատ 10-12 տարեկան:

*Եզրափակիչ փուլ՝ 120 հատ x 2 տարիք = **240 հատ***

Անհրաժեշտ մարզագույք՝ եզրափակիչ փուլի մրցումների կազմակերպման համար՝

13. Մարմնամարզական օղակ՝ ալյումինե, Հաստություն՝ 20մմ, տրամագիծ՝ 95 սմ՝

*5 հատ x 2 տարիք = 10 **հատ***

14. Գնդակ բասկետբոլի՝ արհեստական կաշվից, N 6 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 5-6.

*3 հատ x 2 տարիք = 6 **հատ***

15. Մարմնամարզական ներքնարկներ՝ չափը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով, հաստությունը 7-10 սմ

*3 հատ x 2 տարիք = 6 **հատ***

16. Փոքր օղակ՝ պլաստմասե նյութից, գունավոր, չափերը 30-40 սմ,

*15 հատ x 2 տարիք = **30 հատ***

17. Երկանիվ հեծանիվներ, կցորդ անիվներով(16 դույմ) ՝ 3 հատ

18 երկար սյարկ՝ (թունել 3մ x 1մ) չափսի:

3 հատ x 2 փարիք = 6 ***հատ***

Մարզադահլիճի վարձակալում և ձևավորում Գյումրի և Վանաձոր քաղաքների մարզաբազաներից մեկում:

Մարզադահլիճների ձևավորում դրոշակներով և պաստառներով զարդարված, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդանի առկայություն: Մարզադահլիճի կահավորման տեսքը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝ **1+1 օր**

Հաղորդավարի ծառայություն **1+1 օր**

Ռադիոհանգույցի վարձակալում՝

բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ **1+1 օր**

Մրցավարների համար մարզահագուստ

բամբակյա կտորից, ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով),

գլխարկ՝ 12 հատ x 2 փարիք = 24 ***հատ***

շապիկ՝ *12 հատ x 2 փարիք = 24* ***հատ***

Գովազդային նյութերի պատրաստում (ֆոտո, տեսաֆիլմերի, նկարահանում) *մրցման օրը.* **1+1օր**

- Հրավառություն՝ միջոցառման ավարտին ճայթռուկ ծառայության մատուցում, մարզադահլիճում

6 հատ x 2 փարիք = 12 ***հատ***

Այլ ծախսեր՝ տրանսպորտային միջոցներ մարզագույքը տեղափոխելու համար (Երևան -Գյումրի- Երևան, Երևան –Վանաձոր-Երևան, **1 բեռնատ մեքենա , 1+1 օր**

Գրենական պիտույքներ՝

*Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար.

10 հատ

*Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ) 1տուփ. **50 հատ**

*Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ: **6 հատ**

		*Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ² (210 x 297) մմ: **2 հատ** *Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի: **20 հատ** *Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ: **10 հատ**					

*** Միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում մրցավայրեր՝ 2-րդ փուլում ՀՀ 41 համայնքներ, ԱՀ ք. Ստեփանակերտ և Երևան քաղաքի 10 վարչական շրջաններ, 3-րդ փուլում ՀՀ 10 մարզկենտրոններ, ԱՀ ք. Ստեփանակերտ և ք. Երևան, եզրափակիչ փուլում ք. Գյումրի և ք. Վանաձոր: Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության կողմից կատարողին լրացուցիչ տրամադրվող ժամանակացույցի և պարգևատրման ցանկի համապատասխան տեղերում կազմակերպում է պարգևատրումը, կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառում են ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասը: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:

*** Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը և համաձայն ժամանակացույցի կատարել ծառայությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010957
ՀՎՀՀ 02586282

Գլխավոր քարտուղար՝ Վ. Էլոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Ա.Ավետիսյան 112 7
«Ինեկոբանկ»ՓԲԸ

Հ/Հ 2050622060861001

ՀՎՀՀ 00135548

Տնօրեն՝ Գ.Աբյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«21» 03 2019թ կնքված
ծածկագրով պայմանագրի

ՍՊ-ԳՀԾՁԲ-19/7-131/19

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ.ՀՀ դրամ

...որավ ...ՀրովՀ ...նախ ...ատե ...ված ...չափ ...աբա ...ժնի ...համ ...արը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110/2	Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Երցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-րդից-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման				17876.0	17876.0	17876.0	17876.0	17876.0	17876.0	17876.0	17876.0	17876.0	17876.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010957

ՀՎՀՀ 02586282

Գլխավոր քարտուղար՝ Վ. Էլոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Ա.Ավետիսյան 112 7
«Ինեկոբանկ»ՓԲԸ

Հ/Հ 2050622060861001

ՀՎՀՀ 00135548

Տնօրեն՝ Գ.Ադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«21» 03 2019 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով պայմանագրի
131-19

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010957

ՀՎՀՀ 02586282

Պայմանագրի կողմ
«Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Ա.Ավետիսյան 112/7
«Ինեկոբանկ»ՓԲԸ

Հ/Հ 2050622060861001

ՀՎՀՀ 00135548

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

«21» 03 2018 թ. Հավելված 3.1
«ՍՊ-ԳՀԾՁԲ -19/7» ծածկագրով պայմանագրի
-191-19

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն